**Արձանագրություն N 3**

Դատական դեպարտամենտի կարիքների համար՝ գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/46» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «12» դեկտեմբերի 2019թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Արթուր Եղիազարյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ **ԳՊ/ԳԱՊ**) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետ,

*հանձնաժողովի անդամներ՝*

**Էդգար Տոնականյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Էդգար Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**) ՀՀ վարչական դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Ավետիք Ավագյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) Արագածոտնի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի աշխատակազմի ղեկավար:

**Արմինե Ալիխանյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Շենգավիթ նստավայրի պատասխանատու:

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Մարիամ Հայրապետյան** (Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող՝ **ԳՊ/ՄՀ**) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ:

**1. <<ԴԴ-ԳՀԱՊՁԲ-19/46>> ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերի բացման մասին.**

1.1 Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի /այսուհետ՝ Համակարգ/ միջոցով 2019թ.-ի դեկտեմբերի 12-ին, ժամը 10:00-ին:

1.2 Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

| N | Մասնակցի անվանումը | Մասնակցի գործունեության հասցեն |
|---|---|---|
| 1 | <<ՍԱՔԻ>> ՍՊԸ | ք. Գորիս, Անկախության 2/31 |
| 2 | <<Տեխնիկա Պլյուս>> ՓԲԸ | Եր. Քոչար 5 |
| 3 | <<ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ>> ՍՊԸ | ք. Երևան, Քրիստափորի 2/2 |
| 4 | <<ՇՏՍԱՄՊ - Ն. Մ. Ռ.>> ՍՊԸ | Սունդուկյան 27/100 |
| 5 | <<ԱՏՍ>> ՍՊԸ | ք. Երևան, Մալխասյանց 25 |
| 6 | <<Սմարթլայն>> ՍՊԸ | ք. Երևան, Վարդանանց 110 |

2. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքների գնի վերաբերյալ.

Սույն ընթացակարգը կազմակերպվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

Գնման հայտով գնվելիք ապրանքների գներ սահմանված չեն:

3. Տեղեկատվություն Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի համաձայն՝ մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը գնահատող հանձնաժողովի քարտուղարին հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հիմնավորումներ չեն ներկայացվել:

**4. Տվյալներ բացված յուրաքանչյուր էլեկտրոնային ծրարում /այսուհետ՝ մասնակցի կողմից ներկայացված հայտ/ պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերի առկայության մասին.**

<<ՍԱՔԻ>> ՍՊԸ-ի, <<Տեխնիկա Պլյուս>> ՓԲԸ-ի, <<ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ>> ՍՊԸ-ի, <<ԾՏԱՄՊ - Ն. Մ. Ռ.>> ՍՊԸ-ի, <<ԱՏԱ>> ՍՊԸ-ի և <<Սմարթլայն>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

**5. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի կողմից ներկայացրած հայտի կազմման՝ հրավերով սահմանաված վավերապայմաններին համապատասխանության մասին.**

<<ՍԱՔԻ>> ՍՊԸ-ի, <<Տեխնիկա Պլյուս>> ՓԲԸ-ի, <<ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ>> ՍՊԸ-ի, <<ԾՏԱՄՊ - Ն. Մ. Ռ.>> ՍՊԸ-ի, <<ԱՏԱ>> ՍՊԸ-ի և <<Սմարթլայն>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը կազմված են հրավերով սահմանաված վավերապայմաններին համապատասխան, ուստի վերջիններս գնահատվում են բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

6.Մասնակիցների առաջարկած գներն են՝

ՀՀ դրամ

| Չ/Հ | Չափաբաժնի անվանումը | 1. <<ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ>> ՍՊԸ | | | | | 2. <<Սմարթլայն>> ՍՊԸ | | | | | 3. <<Տեխնիկա Պլյուս>> ՓԲԸ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ինքնարժեք | Շահույթ | Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ | Ինքնարժեք | Շահույթ | Առաջար կած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ | Ինքնարժեք | Շահույթ | Առաջար կած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ |
| 1 | Թուղթ. A4 ձևաչափի | 31350000 | 1650000 | 33000000 | 6600000 | 39600000 | 30899199 | 8100801 | 39000000 | 7800000 | 46800000 | - | - | - | - | - |
| 2 | Նամակի ծրար | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 3 | Դրոշմակնիք | - | - | - | - | - | - | - | - | - | - | 108000 | 12000 | 120000 | 0 | 120000 |

| Չ/Հ | Չափաբաժնի անվանումը | 4. <<ՇՏԱՄՊ - Ն. Մ. Ռ.>> ՍՊԸ | | | | | 5. <<ԱՏԱ>> ՍՊԸ | | | | | 6. <<ՍԱՔԻ>> ՍՊԸ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ինքնարժեք | Շահույթ | Առաջար կած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ | Ինքնարժեք | Շահույթ | Առաջար կած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ | Ինքնարժեք | Շահույթ | Առաջար կած գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ |
| 1 | Թուղթ. A4 ձևաչափի | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | - |
| 2 | Նամակի ծրար | - | - | - | - | - | - | - | - | - | - | 3488524 | 805044 | 4293568 | 858713.6 | 5152281.6 |
| 3 | Դրոշմակնիք | 120000 | 10000 | 130000 | 0 | 130000 | 200000 | 50000 | 250000 | 0 | 250000 | - | - | - | - | - |

**7. Տեղեկություն՝ առաջարկված գների նվազեցման նպատակով միաժամանակյա բանակցություններ վարելու անհրաժեշտության վերաբերյալ,**

7.1 Հաշվի առնելով, որ սույն գնումն իրականացվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝ համաձայն Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի՝ ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով անհրաժեշտություն է առաջանում՝ առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարելու միաժամանակյա բանակցություններ:

7.2 Ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի բ պարբերությամբ՝ հանձնաժողովը որոշեց հանձնաժողովի նիստը կասեցնել և միաժամանակյա բանակցություններ վարելու նպատակով հրավիրել նիստ 2019թ. դեկտեմբերի 16-ին՝ ժամը 12:00-ին՝ Դատական դեպարտամենտի շենքում (ք. Երևան, Վ. Սարգսյան 5):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝

Արթուր Եղիազարյան

Անդամներ՝

Էդգար Տոնականյան

Էդգար Մելքոնյան

Ավետիք Ավագյան

Արմինե Ալիխանյան

Քարտուղար՝

Մարիամ Հայրապետյան